

Հաստատում են՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի  
տնօրեն Ա. Խզմալյան



ԿԱՐԾԻՔ

ԼԻԼԻԹ ԿԱՄՈՅԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ  
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ XII-XVII ԴԱՐԵՐՈՒՄ» Է.00.01  
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ  
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայոց եկեղեցու՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող թեմերի գործունեության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն եկեղեցական, այլ նաև հայկական գաղթօջախների պատմության տեսանկյունից: Այս առումով Լիլիթ Մելիքյանի «Հայկական թեմը և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դարերում» ատենախոսությունը գնահատելի քայլ է և, թերևս, առաջին փորձը՝ վեր հանելու վիրահայոց թեմի՝ XII-XVII դդ. պատմությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից՝ համակարգչային շարվածքի 152 էջ:

Ներածության մեջ ներկայացվել են թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, օգտագործված սկզբնաղբյուրների ու ուսումնասիրությունների տեսությունը, սահմանվել են հետազոտության խնդիրներն ու նպատակները, հիմնավորվել թեմայի ժամանակային սահմանները:

Առաջին գլխում «XII-XIII դարերում Վրաստանում հայոց եկեղեցու կարգավիճակը և հայկական թեմի ձևավորումը», հեղինակը ներկայացրել է հայկական թեմի ձևավորման նախադրյալները և պատմությունը: Մանրամասն

անդրադարձել է Սանահնի թեմի ստեղծմանը, որն առանցքային նշանակություն է ունեցել Վրաստանում հայկական թեմի ձևավորման վրա: Հաջորդիվ ներկայացվում են Վրաստանում հայ համայնքի ստվարացումն ու այդ իրողության ազդեցությամբ հայկական թեմի վերջնական կազմավորումը: Սույն գլխում առանձին քննության են ենթարկվել Վրաց թագավորությունում հայկական թեմի կարգավիճակը, վրացական իշխանությունների հետ հայ հոգևորականության փոխհարաբերությունները:

Երկրորդ գլխում՝ «Հայկական թեմը Վրաստանում XIV-XVI դարերում», մանրամասն անդրադարձ է կատարվել դեպի Վրաստան հայության նոր հոսքի քաղաքական ու տնտեսական դրդապատճառներին, համայնքի ընդարձակմանը և այդ համատեքստում հայկական թեմի գործունեությանը:

Վրաստանում հայոց թեմի ծավալած գործունեությունը մեծապես կապված է եղել հայ համայնքի հետ, և նրանց պատմության զուգահեռ ներկայացումը, կարծում ենք, ըստ ամենայնի, պատճառաբանված է: Թեմայի համակողմանի քննության համար շահեկան է նաև սույն գլխի երկրորդ՝ հայոց եկեղեցական կենտրոնների մշակութային գործունեության մանրամասն ներկայացումը:

Երրորդ գլխում՝ «Վրաստանում հայկական թեմը XVI-XVII դարերում և հայ ազնվական ընտանիքները», ներկայացված է Վրաստանում հայության տեղաբաշխվածությունը, եկեղեցական կյանքը հայահոծ համայնքներում: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ու արխիվային վավերագրերի հիման վրա քննել է Գորիի միաբանության դերակատարումը հոգևոր-թեմական կառուցվածքում: Առանձին ենթագլխով անդրադարձ է կատարվել վրաց թագավորությունում հայ ազնվական ընտանիքների տոհմագրությանը և պատմությանը, վերլուծել է այդ տոհմերի գործունեությանն առնչվող մի շարք դրվագներ, այդ թվում՝ մասնավորեցնելով նրանց դավանական կողմնորոշման հարցը:

Ատենախոսությունն ունի սկզբնաղբյուրային լայն հենք, հատկապես գնահատելի է վրացական մեծաթիվ աղբյուրների, ինչպես նաև ուսումնասիրությունների օգտագործումն, ինչն առավել մեծացնում է հետազոտության գիտական նշանակությունը:

Կարևորելով կատարված աշխատանքը՝ նշենք, որ այն զերծ չէ բովանդակային և տեխնիկական բնույթի թերություններից, որոնց վերաբերյալ ստորև ներկայացվում են որոշ դիտողություններ:

1. Հիմք ընդունելով ատենախոսության շարադրանքը, որը վերաբերում է Վրաստանում հայկական թեմի պատմությանը, կարծում ենք՝ այն պետք է վերնագրվեր ոչ թե «Հայկական թեմի և Հայոց եկեղեցու կարգավիճակը Վրաստանում XII-XVII դդ.», այլ՝ «Հայկական թեմի կարգավիճակը Վրաստանում XII-XVII դդ.»։ Ըստ այդմ՝ 1.3 ենթագլուխը՝ «XII-XIII դարերում Վրաստանում Հայոց եկեղեցու կարգավիճակը», պետք է լիներ «Հայկական թեմի կարգավիճակը XII-XIII դարերում Վրաստանում»:

2. Բուն շարադրանքի ծավալը (120 համակարգչային էջ) թեմայի ժամանակագրական լայն ընդգրկման (XII-XVII դդ.) համեմատ, սեղմ է:

3. Ներածության մեջ, իբրև հետազոտության ենթակա հիմնախնդիր, նշված է հետևյալը. «Պարզաբանել և վերլուծել վրաց իշխանությունների և Սբ. Էջմիածնի միջև առկա փոխհարաբերությունները, վերհանել դրանցում առկա խնդիրները, վերջիններիս ծագման պատճառները և հետևանքները (էջ 7): Սակայն այս հիմնախնդրի վերաբերյալ ատենախոսության մեջ կա միայն մի քանի հպանցիկ անդրադարձ (էջ 33, 83), այն էլ՝ հիմնականում թեմայի ժամանակագրական սահմաններից դուրս՝ 18-րդ դարին առնչվող:

4. Ատենախոսության մեջ վրաց թագավորների կողմից հայ ազնվականությանը շնորհված սեփականության կապակցությամբ քանիցս գործածված է «ողորմագիր» (էջ 104, 106) եզրույթը, որը, թերևս, վրացերենից թարգմանություն է: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ ծանոթագրել այն:

5. Ատենախոսության 108-րդ էջում գրված է Շանշինյան տոհմ, իսկ մեկ էջ անց՝ էջ 109-ում, Շանշյան տոհմ: Նույնն է նաև հետագա էջերում, իսկ 112-րդ էջում առկա է նաև Շահնշյան ձևը: Կարծում ենք՝ այս ազգանունը պետք է բերել միօրինակության:

6. Կարծում ենք՝ ճիշտ չէ XIX դարի տեղագիր, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (Տփխիս, 1858) աշխատության հեղինակ Սարգիս Զալայանցին տրված մատենագիր բնորոշումը (էջ 10):

7. Ատենախոսը Բեհբուդյանների հայկական տոհմի գործունեությանն անդրադառնալիս (Գլուխ 3.2, էջ 116) գրում է, որ «Վարչական գործառույթը բնութագրական էր մնում Բեհբուդյանների համար ամբողջ XVII դարի ընթացքում» և բերում է միայն մեկ օրինակ, որ Բեհբուդյան տոհմից Աշխարհբեկի որդի Աղան «...էր քալանթար և մէլիք Թիֆլիզու»: Կարծում ենք՝ հարկ էր հավելել, որ Բեհբուդյանները ժառանգաբար վարել են Տփղիսի քաղաքագլխի պաշտոնը:

8. Ողջունելի է, որ ատենախոսության հավելվածում ներկայացված են Վրաստանի հայ ազնվականական ընտանիքների տոհմաձառերը: Սակայն առավել շահեկան կլիներ, եթե հնարավորության դեպքում, նշվեին այդ գործիչների ծննդյան և մահվան թվականները (թեկուզ՝ մոտավոր):

9. Իրանի Եզդ քաղաքի անունը գրվում է ոչ թե «Յեզդ» ձևով, այլ առանց «Յ»-ի՝ «Եզդ» ձևով (էջ 103):

10. «Վանքում առկա է Բարսեղ եպիսկոպոսի դամբանագիրը» ձևը սխալ է, պետք է լինի՝ վանքում առկա է Բարսեղ եպիսկոպոսի տապանաքարը՝ հետևյալ արձանագրությամբ (էջ 108):

11. Վրացերեն աղբյուրներից և մասնագիտական գրականությունից կատարված թարգմանությունները կարիք ունեն խմբագրման:

12. Պատմիչների անունները հարկ է գրել ամբողջությամբ. ոչ թե Կ. Գանձակեցի, այլ՝ Կիրակոս Գանձակեցի, ոչ թե Ջ. Քանաքեռցի, այլ Ջաքարիա Քանաքեռցի:

13. Ատենախոսությունը թեև հիմնականում շարադրված է գրագետ, այդուհանդերձ, դրանում տեղ են գտել տեխնիկական բնույթի վրիպակներ:

Ամփոփելով՝ նշենք, որ հետազոտական աշխատանքը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:



Կարծիքը հաստատվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «15-19-րդ դարերի հայ մատենագրության» բաժնի 2023 թ. դեկտեմբերի 14-ի նիստում:

Նիստին մասնակցել են պ.գ.թ. Արտակ Մաղալյանը, պ.գ.թ. Փիրուզ Մնացականյանը, պ.գ.թ. Հրանտ Օհանյանը, պ.գ.թ. Հայկ Հակոբյանը, պ.գ.թ. Նարեկ Հակոբյանը, պ.գ.թ. Անահիտ Մխիթարյանը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի  
«15-19-րդ դարերի հայ մատենագրության»  
բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Հրանտ Օհանյան

14.12.2023

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի  
«15-19-րդ դարերի հայ մատենագրության»  
բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Հրանտ Օհանյանի  
ստորագրությունը հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի  
տնօրենի գիտական գծով տեղակալ, պ.գ.թ. Կառն Թորոսյան



14.12.2023